



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Հ Յ Ա Զ Ո Յ Վ

1928

«ՀԱՅԿՈՌՈՒ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԻՒՅ

1.	Հ.	Մ.	Ինչպես պետք է լինի կոսովերառ-	
			տխիլի դործակառարը	— 03
2.	Պ.	Ֆուլյան Կորչեն չարչիները		— 03
3.	Ա.	Շալով Հաշվաղահութ. համաստ ձեռ-		
		նարկ		2 —
4.	Ա.	Շահնազարյան* Ազատարարը		— 20
5.	Գ.	Նազարյան Կոսովերատիվ խանութի սուրք		
		ու կարգը (թարգմ.)		— 05
6.	Բ.	Զիլավյան* Փրկիչ կոսովերատիվ		— 07
7.	Շալով Ազրանեփների զնահատումը սովոր-			
		դական ընկ.		— 35
8.	Վ.	Խիժնյակով* Սովորեցեք քննություն կո-		
		տարել		— 60
9.	Ա.	Չայանով Կոսովերացիայի համաստ զաս-		
		ընթացք		— 30
10.	Գ.	Պիճիլյան* Պատմություն Հայաստանի		
		սովառող. կոսով.		1 20
11.	Պ.	Ստամբուլցյան* Հայաստանի սովառ. կոս-		
		ովերացիան և նրա խնդիրները		— 70
12.	Ն.	Ռատրովսկյան Ինչի համար և պետք կոսով.		
		դեղջկուհուն և բանվորին		— 20
13.	Ն.	Պաժիստինով Գյուղական սովառ. կոսով.		
		ընկ. վարչութ. ինչպես պետք է հաշիվ տա		— 10
14.	Ա.	Խիկով Գյուղը, տնտ. նոր քաղ. և		
		կոսովերացիան		— 20
15.	Շալով Մարկաների սիստեմ			— 35
16.	Ցիկովարով Ինչու պետք է խմոնալ ընկ.			
		կանոնադրութ.		— 25

ԳԱՅԿՈՂ

Խ 7 ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ Խ 7

Ա. ԳՈՄԻՑԿԻՑ

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ =  
= ՅԵՎ ԻՆՉՊԵՍ

ՊԻՏԻ ԶԵԿՈՒՑԵՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ  
ՎԵՐԱՍՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՎԵՏՈՒ ԺՈՂՈՎՈՒՄ

Խ 7

A 1  
8324



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՂԻ

ԵՐԵՎԱՆ 1928 թ.

ՀԱՅՈՒՏԻԿՐԱՔԻ Տ ՏԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 612  
ԳՐԱՌԵՊԱԼԻԿ 1087 Բ.  
ՏԻՐԱԺ 8000

## I.

**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՒ-  
ՂՈՎԻ ԳԱԾՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓԱՇԱՏԵՐԵՐԻ ԱՌԱՋ**

Սպառողական ընկերության տերը հանդի-  
սանում է նրա փայտերերի ժողովը կամ, տ-  
ուանձնապես մեծ կոոպերատիվներում, այդ  
փայտերերի լիազորների ժողովը։

Վարչությունը ժողովի հավատարմատարն  
է, ուստի Վարչության անդամները պարտա-  
կան են իրենց գործունեյության մասին հաշիվ  
տալ ժողովի առաջ։ Վարչությունը պարտա-  
կան է ամբողջ տարվա իր գործունեյության  
մասին լիակատար հաշիվ տալու այն հաշվե-  
տու ժողովում, վոր հրավիրելու յե տնտեսա-  
կան նոր տարվա առաջին յեռամսյակում։

Շատ սպառողական ընկերությունների  
վարչություններ չեն ըմբռնում, թե ինչպիսի  
մեծ նշանակություն ունի իր հաշվետվությու-  
նը փայտերերի առաջ։ Շատ վարչություն-  
ներ կարծում են, վոր այդպիսի հաշվետվու-  
թյունը մեծ նշանակություն չունի և վոր այդ  
արվում է ձևի համար, այսինքն նրա համար,  
վոր այդ պահանջում է ընկերության կանո-  
նադրությունը։

Այս տեսակետը վերջին ժամանակներում  
տվելի ու ավելի հետ ե մղվում, սակայն դեռ  
շատ դեպքերում առիթ ե լինում դործ ունե-  
նալ նրա հետ։ Պատճառն այն ե, վոր իրենք  
փայտերերը մի քանի կոոպերատիվներում  
չեն հետաքրքրվում իրենց կոոպերատիվի հաշ-  
վետվությամբ, մանավանդ վոր վարչություն-  
ներն իրենց հերթին քիչ ջանք են թափում շա-  
հագրգություն առաջացնելու այդ կոոպերա-  
տիվներում։

Փայտերերը մտածում եյին, և այժմս ել  
յերբեմն մտածում են այսպես՝ «Մենք ընտրել  
ենք Վարչություն, նա գործել ե, ինչքան կա-  
րողացել ե, և յեթե հետևանքը վաս ե, ի՞նչ  
կարող ենք անել, հաշվետվությունը չի ոգ-  
նի»։ Իսկ Վարչության անդամները հաճախ  
այսպես են գատում։ «Մեր աշխատանքը բոլոր  
ժամանակ կատարվել ե փայտերերի աչքի ա-  
ռաջ, ել ի՞նչ հաշվետվության կարիք կա։ Յեվ  
յեթե հաշիվ տալու ել լինենք, մեր գործունե-  
յության մասին, միենույնն ե նրանք վոչինչ  
չեն հասկանա, մանավանդ վոր շատ բարդ ե  
մեր աշխատանքը և անհնարին ե այդ բոլորը  
պատմել»։ Յեվ հաճախ այս խոսքերի տակ  
թագնված ե լինում այն վախը, վոր կարող է  
ընկերությանը հասցրած իրենց վնասակար  
գործունեյության համար դատապարտության  
խոսք լսել։

Հազիվ թե կարիք լինի ապացուցել, թե  
այդ տեսակետները վորքան անհիմն են։

Փայտերերն արդեն սկսում են հասկանալ,  
վոր վարչության հաշվետվությունն անհրա-  
ժեշտ ե այն պատճառով, վոր միմիայն այդ  
հաշվետվությունից ենող իրենք կարող են  
գնահատել Վարչության անցյալ գործունեյու-  
թյունը, վորոշել նրա քերություններն ու նվա-  
նումները, նիշտ հասկանալ ընկերության խ-  
կական դրությունը և ամենից լավ նշել ապա-  
գա գործունեյության պլանը:

Ասել, թե վարչության գործունեյության  
հետեանքները ավելորդ ե քննել, ըստ վորում  
նա արդեն կատարված ե, վոչ մի դեպքում չի  
կարելի, — և չի կարելի այն պատճառով, վոր  
վարչության մի քանի անկանոն գործողու-  
թյունները քննելուց հետո, կարելի կլինի ուղ-  
ղել, իսկ լավ գործերը, յեթե այդպիսին յե-  
ղել ե, հարկավոր ե ավելի ևս լավացնել և այդ  
ընդունել հիմք ապագա պլանի: Աւստի վար-  
չության լիակատար հաշվետվությունը պետք  
է շատ հետաքրքրի փայտերերին և այդպիսի  
հաշվետվություն նրանք, ինչպես ել լինի,  
պետք ե պահանջեն Վարչությունից:

Ավելի անհիմն ե վարչությունների ան-  
դամների մտածելակերպը, վորոնք ասում են,  
հաշիվ տալու կարիք չկա, ըստ վորում իրենց  
աշխատանքը կատարվում ե փայտերերի աշ-  
քի առաջ: Զե՞ վոր փայտերերը լավագույն  
դեպքում տեսնում են միմիայն Վարչության  
աշխատանքի հետևանքները, այս կամ այն ապ-  
րանքի վաճառքը այս կամ այն գնով, փայտ-

տերերին արված մի քանի արտանությունները, առևետրի մեջ նկատվող հարժար կամ անհարժար կարգերը և այլն։ Մինչդեռ թե ի՞նչու աշխատանքը տարվում է այս կերպ և վոչ այլ կերպ, փայտերը տեսնելով միմիայն աշխատանքի հետեանքները, հասկանալ չի կարող։ Իսկ այդ հասականալ նրանք պարտական են, որովհետեւ կոսպերատիվը նրանց կազմակերպությունն է, նրանք են ստեղծել և ամենից առաջ նրանց պիտի նա ծառայի։ Փայտերերը հասկանալով Վարչության այս կամ այն արարքի պատճառները, միշտ ել կարող կլինեն Վարչության ապագա աշխատանքներին այնպիսի ընթացք տալ, վոր իրենց սպառողական րնկերության գործերը լավանան և ամբանան։ Ուստի Վարչության հաշվետվությունը և այն ել լիակատար ու սպառիչ հաշվետվությունը փայտերերի առաջ անհր սժեշտություն և։ Յեթե փայտերերը դեռևս այն աստիճան դիտակից չեն, վոր կարողանան ճիշտ հասկանալ Վարչության հաշվետվության նշանակությունը, ապա Վարչության առաջին պարտականությունը կայանում է նրանում, վոր նա փայտերերին դարձնի գիտակից և մոցնի նրանց զլխում ընտրված մարմինների լիակատար հաշվետվության միւնքը ընտրողների առաջ։

Այն պնդումը, թե հաշվետվությունը չի կարելի փայտերերենին հասկանալի ձեռով տալ, բոլորովին անհիմն է։ մինչեւ անգամ ավելի դժվար խնդիրներ, քան կոսպերատիվի աշխա-

տանքն է, կարելի յե բացատրել փայտաերերին նրանց հասկանալի ձևով։ Յեթի Վարչությունը չի ցանկանում դիտավորյալ կերպով խննել հաշվետվությունը և զեկուցել այն մըրքագնած ու անհասկանալի ձևով, փայտերերը միշտ ել կհասկանան հաշվետվությունը, այլ կերպ չի ել կարող լինել, վորովհետեւ վարչության անդամները դուրս են դալիս նույն փայտաերերի միջից, և այն՝ ինչ վոր հասկանալի յե նրանց, չի կարող հասկանալի չլինել փայտաերերին։ Այն տեսակետը, թե փայտերերը չեն կարող հաշվետվությունը հասկանալ, ոյզ տևաղեաի դեմ հարկավոր ե վճռական և խիստ պայքար մզել, սովորաբար այդպիսի տեսակետի տակ թագնված ե լինում վասմիտք—կոռովերատիվ գործի տերերից թագցնել նրանց բնարած մարմինների վատ արարքները։

Կուսակցական, խորհրդային և կոռապերատիվ բարձր մարմինները մեծ ուշադրաւթյամբ են դարձնում, վարպեսզի վարչությունների հաշվետվությունը փայտաերերի առաջ դրված լինի իր բարձրության վրա։ Այս մասին ամենից առաջ պետք է գիտենա ինքը վարչությունը—Վարչությունը չպետք է մոռանա, վոր լիակատար հաշվետվությունը փայտաերերի կամ լիազորների ժողովի առաջ հանդիսանում ե նրա առաջին և հիմնական պարտականությունը։

Այն, ինչ վոր ասացինք Վարչության հաշվետվության մասին, նույնն անհրաժեշտ է

տաել նաև Վերստուգիչ Հանձնաժողովի հաշ-  
վետվության մասին։ Վերստուգիչ Հանձնաժո-  
ղովի անդամներն ընտրվում են ժողովի կող-  
մից վոչ թե «չնորդի» համար, այլ նրա հա-  
մար, վոր նրանց աշխատանքը չատ անհրա-  
ժեշտ է ընկերությանը։ Այդ աշխատանքի մա-  
սին, ինչպես ել վոր նա կատարված լինի,  
Վերստուգիչ Հանձնաժողովը պարտական է  
հաշիվ տալ տարեկան ժողովին։

Թի փայտերերը և թե մանավանդ ընտրո-  
վածները (վարչությունների և վերստուգիչ  
Հանձնաժողովների անդամները) չպետք է մո-  
ռանան, վոր միմիայն վարչությունների և  
վերստուգիչ հանձնաժողովների խիստ ու լիա-  
կատար հաշվետվությամբ փայտերերի կամ  
լիազորների ժողովի առաջ՝ մենք կամքապե-  
ղենք ազգաբնակության կապը կոռպերացիայի  
հետ և կկառուցենք իսկական ու լավ կոռպե-  
րատիվային աշխատանք։

Տարեկան հաշվետու ժողովների խնդիրնե-  
րը ներկա տարում ավելի քան կարեւորություն  
են ստանում, ըստ վորում այդ ժողովները մենք  
կապում ենք Հոկտեմբերյան Հեղափոխության  
տասն և մեկամյա տօնակատարության հետ և  
տարեկան ժողովների միջոցով խորհրդացին  
սպառողական կոռպերացիան կենթարկենք  
իսկական հետազոտության։

Այդպիսի հետազոտությունն առավել և ա  
անհրաժեշտ է այն պատճառով, վոր այժմ  
մենք կոռպերացիայի ուժեղացման խնդիրները

պետք ե գնահատենք, վորակես պետական առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիրներ։ Մեր խաղաղ սոցիալիստական շինարարությանը սպառնում ե պատերազմ—մենք պետք ե բարձրացնենք ու ամրապնդենք յերկրի ինքնապաշտպանությունը, խել կոռավերացիացի ամրապնդումը, նրա աշխատանքի լավացումը կազմում ե Խորհրդային Միության ինքնապաշտպանության ամրացման ընդհանուր աշխատանքների կարևորագույն մասը։

Ի՞նչպես կանոնավորել վարչությունների և վերստուգիչ հանձնաժողովների խսկական լիակատար և ուղիղ հաշվետվությունը փայտերերի առաջ նրանց տարեկան ժողովներում, ահա այս խնդիրները հանդիսանում են ներկայումս կոռավերացիայի և Խորհրդային հասարակայնության համար առանձին կարևոր խնդիրներ։ Նրանց լուծմանը պետք ե նվիրել վորքան կարելի յե մեծ ուշադրություն։ Ոգնել տեղի աշխատակիցներին այս խնդիրների լուծման գործում, և ահա սա յե ներկա գըրքույկի նպատակը։

---

## II

## ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

## Ա. ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑԵԼ

Յերբ Վարչությունը պատրաստվում է տարեկան ժողովի համար կազմել հաշվեառ զեկուցում, նրա առաջ անդայման հարց և ծոգում, ի՞նչի մասին զեկուցել: Մի տարվա ընթացքում այնքան մեծ աշխատանք է կատարել և այնքան շատ փոփոխություններ են տեղի ունեցել սպառողական ընկերության կանոնադրության մեջ, վոր դժվար է լինում մեկն հաշվի առնել, թե ինչը կարեոր է լուսաբանել զեկուցման մեջ, և ինչը՝ առանց գործին վնասելու՝ կարելի յե բաց թողնել:

Վորոշել, թե վո՞ր հարցերը հաշվեառ զեկուցման մեջ հարկավոր են ավելի լրիվ հրապարակ բերել ու լուսաբանել, սա յե դառնում Վարչության առաջին խնդիրը իր զեկուցումը պատրաստելու ժամանակ: Յեթե հարցերը նրանք կլինեն նպատակահարմար, Վարչության համար դժվար չի լինի ձեռք բերել այդ հարցերը լուսաբանող անհրաժեշտ տեղեկությունները, ու զեկուցումը կլինի և՛ լրիվ, և՛ բովանդակալից, և՛ հետաքրքիր: Իսկ այս ամենագլխավորն է:

Ինքնըստինքյան հասկանալի յի, վոր Վարչությունը վոչ մի դեպքում չի կարող և չպետք է ընտրի իր զեկուցման համար այնպիսի հարցեր, նայելով թե նրանք ինչ տպավորություն կթողնեն ժողովի ժամանակ, այսինքն, յեթե վատ ե, այդ հարցերի մասին բոլորովին չխռուել, իսկ յեթե լավ ե, հենց գրա մասին ել զեկուցել։ Այսպիսի մոռեցումը միանդամայն անթույլատրելի յե։

Վարչության համար պետք է կանոն լինի՝ իրա ամբողջ տշխատանիքը բաժանել յերկուսի —ալելի կարևորների ու եյականի և ֆիչ կարեվորների ու վոչ եյականի։ Հարկավոր է զեկուցել ավելի կարևոր բաների մասին, իսկ վոչ եյական ու ֆիչ կարևորներից վերցնել հենց այն հարցերը, վորոնց վերաբերմամբ Վարչությունը կատարել ե այս կամ այն սխալը։ Վարչությունը իր անկանոն գործողությունների համար չպետք է լոի։ Վարչության անդամները լինելով հասարակական մարդիկ պետք է հասկանան, վոր փայտերից վոչինչ քազցնել չի կարելի։

### ա) ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՏԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ի՞նչից պետք է սկսի Վարչությունն իր զեկուցումը։ Վորպեսզի կարելի լինի պատասխանել այս հարցին, պետք է հիշել, վոր սպոտղական ընկերությունը, վորպես տնտեսական կադմատկերպություն, մեծ չափով կախումն

ունի այն ընդհանուր պայմաններից, վորոնց  
մեջ նա գործել է տվյալ ժամանակամիջոցում  
(Հաշվական տարում): Յեթ Վարչությունն իր  
ղեկուցման մեջ պետք է լուսաբանի այդ աշխա-  
տանքի բնդիանուր պայմանները:

Յեթե, որինակ, խոսքը վերաբերում է  
այնպիսի սպառողական ընկերության հաշվե-  
տվության, վորը գտնվում է այնպիսի շրջա-  
նում, ուր ստացվել է լավ բերք, Վարչությու-  
նը պետք է նշի, վոր լավ բերքի շնորհիվ մեծ  
չափով բարձրացել են մթերումների հնարավո-  
րությունը շրջանում և ընկերության անդամ-  
ների ու մնացյալ ազգաբնակության գնողա-  
կան ունակությունները. հետեւապես ընկերու-  
թյան աշխատելու ընդհանուր պայմանները յե-  
ղել են բարենպաստ: Ապա հարկավոր կլինի  
խոսել ապրանքներ ձեռք բերելու պայմաննե-  
րի մասին, այն մասին, թե արդյոք ընկերու-  
թյունն անհրաժեշտ ապրանքներն ստանալու  
գժվարություններ չի՝ կրել, ըստ վորում, շու-  
կայում քիչ ապրանք յեղած դեպքում, հարկա-  
դրված են լինում ապրանք գնել կանխիկ հաշ-  
վով կամ խիստ կարճատե վարկով, իսկ ընկե-  
րության համար այդպիսի գնումները ծանր  
ելին:

Իհարկե, յեթե յեղել են տեղական ընդհա-  
նուր պատճառներ, վորոնք կամ թուլացրել ե  
կամ, ընդհակառակը, ուժեղացրել են ընկե-  
րության գործունեյությունը, այդ ևս պետք է  
լուսաբանել: Այստեղ—զեկուցման այս ընդ-

հանուր մասում—վարչությունը պետք է, այս-  
պիսով, լավ հիշի անցած տարվա աշխատանքի  
հանգամանքները, և ամփոփ խոսքերով նկա-  
րագրի այն:

բ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ  
ԿԱԶՄԸ

Ապա գալիս ե արդեն զեկուցման բուն եյա-  
կան մասը: Այստեղ վարչությունը պետք է  
վորոշի:

Ընկերությունը ամրապնդվե՞լ ե, թե թու-  
լացել և

Նա ամո՞ւր ե կապվել իր փայտերերի և  
իր շրջանի ազգաբնակության հետ, թե՞, ընդ-  
հակառակը, կտրվել ե նրանցից և աշխատել է  
տանց կապ հաստատելու նրանց հետ:

Այս հարցերն ամենակարևորն են և նայած  
դրանց պատասխանին, կարելի յե առանց սը-  
խալվելու գաղափար կազմել ընկերության  
գործունեյության բնույթի մասին: Այս հար-  
ցի նկատմամբ յուրաքանչյուր պնդում պետք է  
հաստատվի ճշմարիտ թվերով, ապացուցանե-  
լով, նաև որինակներով:

Հետո Վարչությունը բերում է տվյալներ  
ընկերության անդամների կազմի մասին:

1. Ընկերությունը քանի՞ անդամ ուներ  
անցած տնտեսական տարվա սկզբում և քանի՞  
անդամ տարվա վերջում:

2. Քանի՞ նոր անդամ ընդունել է ընկերության մեջ և քա՞նիսը դուրս է գտացել Արա կազմից (տվել է դիմում դուրս գալու մասին տարվա ընթացքում):

3. Փայտտերերի կազմի մեջ քանի կին և քանի 16–18 տարեկան անչափահաս քաղաքացիներ կային:

4. Փայտտերերի կազմի մեջ վո՞րքան չքավորներ կային, վո՞րքան միջակներ և վո՞րքան ունեռներ, ի՞նչ առանձին միջոցներ եյին ձեռք առել չքավորներին անդամագրելու համար. չքավորների անդամագրման ի՞նչպիսի ֆոնդ գոյություն ուներ և ի՞նչպես ենա ոգտագործվել:

5. Զափահաս վողջ ազգաբնակության վո՞ր տոկոսն է անդամագրվել ընկերությանը և ընկերության փայտտերերը տնտեսությունների վո՞ր թիվն են կազմում:

6. Ընկերությունն ի՞նչպիսի փայտդրամագլուխ ուներ մի տարի առաջ և ի՞նչպիսին ունի հաշվետու տարվա վերջում:

7. Ընկերության մեջ քանի՞ լրիվ փայտուժած անդամներ կային հաշվետու տարվա սկզբում և վերջում:

8. Վո՞րքան եր մեկ անդամի միջին փայտ հաշվետու տարվա սկզբում և վերջում. և ի՞նչ է առում այդ գումարի տարրերությունը, վո՞րքան և լրիվ փայտտեր անդամների թիվը ընկերության մեջ:

9. Ի՞նչ միջոցներ ե ձեռք առել Վարչու-  
թյանը այն փայտերերի նկատմամբ, վորոն ի  
իր ժամանակին չեն մուծում փայտնարները  
և չեն պահպանում սահմանված մուծումների  
ժողովակետները:

10. Փայտերերի ժանի<sup>o</sup> ժողով ե գումար-  
վել հաշվետու տարում, նրանք ի՞նչպես են  
անցել, ի՞նչ չափով են մասնակցել փայտե-  
րերն այդ ժողովներին և ի՞նչ չափով այդ ժո-  
ղովներն ավելացրել և ամրապնդել են ընկե-  
րության կապը անդամների և ամբողջ ազգա-  
բնակության հետ:

11. Ի՞նչպես եր գործում կոռպերատիվ  
ակտիվը, ի՞նչ եյին անում իրենք փայտե-  
րերը կոռպերացումը բարձրացնելու և փայ-  
տնարները գանձելու համար:

12. Ի՞նչպիսի միջոցներ եյին ձեռք առնվել  
բարձրացնելու համար չժավորների, կանաց  
և յերիտասարդության ակտիվությունը:

Այս հարցերով ապառվում ե զեկուցման  
այն մասը, վորը նվիրված ե լինում ընկերու-  
թյան անդամների կազմին: Այս հարցերը ներ-  
կայացվում են շատ հասարակ ձեռվ և առան-  
ձին բացատրությունների կարիք չի լինում:  
Ուստի մենք կանգ կառնենք միմիայն հիշյալ  
բոլոր հարցերից ամենաբարդերի և կարեորնե-  
րի վրա:

Շատ կարևոր հարց հանդիսանում ե այն,  
թե փայտերերն իրենց կարողությունով ի՞նչ-  
պիսի խմբերի յեն բաժանվում (չքավորներ,

ժիշտակներ, ունեղըներ) : Այստեղ հարկավոր եցույց տալ վոչ միայն յուրաքանչյուր խմբի անդամների թիվն ընկերության մեջ, այլ և այդ խմբերին պատկանող գյուղացիների թիվը ընկերության գործունեյության շրջանում :

(որինակ՝ 150 չքավորներից անդամագրվել են ընկերությանը միմիայն 9-ը, կամ 6%-ը, 200 միջակներից անդամագրվել են 20-ը, կամ 10 տոկոսը, 50 ունեղըներից՝ 35-ը, կամ 70 տոկոսը : Հիշյալ թվերի համեմատությունից պետք է հանել յեզրակացություն. յեթե չքավորների կոռպերացման տոկոսը ցածր է, պետք է բացատրել, ինչի արդյունք և այդ, նույնը միջակների նկատմամբ և այլն) : Վարչությունը այստեղ պետք է լավ հասկանա, վոր սպառողական ընկերությունն, ամենից առաջ, չքավորի և միջակի համար է, և վոր ունեվորների գերակշռությունը փայտերերի կազմի մեջ կհասցնի այն կետին, վոր նրանք կազմուեն սպառողական ընկերության միջոցով լավացնել իրենց դրությունը (առանց դրան ել վոչ վատ) ի հաշիվ չքավորների ու միջակների և ընկերությունը դարձնել իրենց ազդեցության կենտրոնը չքավորների նկատմամբ :

Զափահաս ազգաբնակության կոռպերացման ընդհանուր տոկոսն ստանալ բոլորովին զժվար չե. այդ ստանալու համար հարկավոր է փայտերերի թիվը բազմապատկել 100-ով և բաժանել չափահաս վողջ ազգաբնակության ընչերի թվի վրա: (Յեթե ընկերության փայտ-

տերերի թիվը 358 է, իսկ չափահաս քաղաքացիների թիվը 1432, ապա չափահաս ազգաբնակության կոռուպտացման տոկոսը կկազմի  $358 \times 100 : 1432 = 35 \cdot 800 : 1432 = 25$ ) :

Տնտեսությունների կոռուպտացման տոկոսը վորոշվում է դարձյալ նույն ձևով: (Յեթե ընկերության շրջանի բոլոր տնտեսությունների թիվը 720 է, իսկ անդամների թիվը 358, ապա կարելի յեւ հաշվել, վոր տնտեսությունների կոռուպտացման տոկոսը կլինի  $358 \times 100 : 720 = 50$  տոկոս. այս հաշվեառումը ճիշտ է սակայն այն դեպքում, յեթե մեկ տնտեսությունն ընկերության մեջ մեկ անդամից ավելի չունի):

Ինքնքստինքյան հասկանալի յեւ, վարչությունը չի կարող սահմանափակվել կոռուպտացման վերաբերյալ տվյալների զեկուցումով միմիայն մեկ մոմենտի նկատմամբ (հաշվետու շրջանի վերջը). այստեղ անհրաժեշտ է բերել տվյալներ անդամների թվի փոփոխության մասին և լուսաբանել այդ փոփոխության պատճառերն ընդհանրապես: Եատ կարեւոր է կոռուպտացման տոկոսը և տվյալ ընկերության անդամների շարժման վերաբերյալ տվյալները համեմատել նույն շրջանի մի այլ ընկերության համապատասխան տվյալների հետ:

Փայտդրամադլուխը հանդիսանում է սպառողական ընկերության կոռուպտացման ուժի ցուցանիշը: Ուստի զատ կարեւոր ն համեմատել տարրեր մոմենտների փայտդրամադր-

լուխների գումարները : Սակայն միմիայն այս  
համեմատությունները քիչ բան են ասում . Հար-  
կավոր է իմանալ վորքան և կազմում մեկ ան-  
դամի միջին փայտվճարը : Այս իմանալու հա-  
մար պետք է վերցնել տվյալ մոմենտի փայտ-  
վճարամագլուխը և բաժանել ընկերության նույն  
մոմենտում ունեցած փայտերերի թվի վրա :  
Այս միջին գումարը հարկավոր է համե-  
մատել կանոնագրությամբ սահմանված փայտ-  
վճարի հետ և այստեղից հանել յեզրակացու-  
թյուն, փայտվճարներից ինչպիսի գումար գեռ-  
ես չի գանձել ընկերությունը :

Վարչությունը պետք է ուշագրությամբ  
հետեւի ժամկետներին, յերբ փայտերերը  
պարտավոր են մաս-մաս վճարել փայտվճար-  
ները : Վարչությունները սովորաբար այդ  
ժամկետներին չեն հետեւում, այդ պատճառով  
ել փայտերերի կողմից տեղի յեն ունենում  
փայտամուծումների խախտում : Առանձին հար-  
կավոր է ցույց տալ ընկերության լրիվ փայ-  
մուծած անդամների թիվը :

Բնդհանուր ժողովները հանդիսանում են  
դեպի ընկերությունն ունեցած աղգարնակու-  
թյան հետաքրքրության լավագույն ցուցանի-  
ւը : Ուստի վարչությունը պիտի հաշվի, թե  
քանի՞ ժողով է գումարվել հաշվետու տարում  
և ի՞նչ չափով են փայտերերը մասնակցել այդ  
ժողովներին : Բացի այդ, վարչությունը զեկուց-  
ման այս մասում պետք է ցույց տա կոոպե-  
րատիվ ակտիվի աշխատանքները : Առանձին

ուշակը ություն պետք է դարձնել այն բանին, թե ընկերության գործունեյությունը դների իջեցման ընադավառում ինչ ազդեցություն է ունեցել ազդաբնակության կոռապերացման և փայտքամագլխի աճման նկատմամբ:

Զեկուցման այս մասի ընդհանուր յեզրակացությունը պետք է ամփոփի իր մեջ հետեւյալ հարցի պատասխանը.

Փայտերերը և վաղ ազգաբնակությունը ի՞նչպիսի վերաբերմունք ուներ և ներկայումս ի՞նչպես ե վերաբերում ընկերությանը, և ընկերության վարչությունը ինչպիսի աշխատանք է տարել, վորպեսզի արժանանա և արդարացրած լինի ազգաբնակության վստահությունը:

#### գ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԴՈՒՇՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ.

Առեսուրը հանդիսանում է յուրաքանչյուր սպառողական ընկերության հիմնական աշխատանքը: Ուստի հաշվետու զեկուցման մեջ անհրաժեշտ է առանձնապես կանգ առնել դրավրա:

Հիմնական հարցերը, վոր պահանջվում են հաշվետու զեկուցման այս մասը լուսաբանելու համար, հետեւյալն են.

1. Ընկերությունը ունեցել ե՞ հաշվետու տարում առևտրական գործունեյության պլան:

2. Հաշվետու տարում ընկերությունը ի՞նչ գումարի ապրանք է գնել:

3. Հաշվետու տարում ընկերությունը ի՞նչ տեսակի ապրանքներ ե գնել և փայտերերը մասնակցություն ունեցել են գնելիք ապրանքների տեսակավորումը կազմելու աշխատանքների մեջ :

4. Ի՞նչպես ե փոփոխվել ընկերության շրջանառությունն ամսե-ամիս :

5. Ընկերությունն իր գնումներով ի՞նչ իհմնարկների հետ ե կապված յեղել : Վո՞րպիսի սերտ կապ ե ունեցել նա Միության հետ գնումների նկատմամբ : Այդ կապը բուլացել ե, բե՞ ամրապնդել : Ընկերությունը գնել ե ապրանքներ մասնավոր առևտրականներից, ի՞նչ տեսակի ապրանքներ ե գնել, ի՞նչ գումարի և ի՞նչու :

6. Ի՞նչ վորակի յեն յեղել գնված ապրանքները :

7. Ընկերությունն ապահովված ե յեղել անհրաժեշտ ապրանքների պահանջվող տեսակներով : Չի՞ յեղել արդյոք մի քանի տեսակ ապրանքների կուտակում և մի քանի տեսակի պակասություն : Ցեվ ի՞նչու :

8. Ի՞նչ միջոցներով ընկերությունը գնում էր ապրանքներ :

9. Ի՞նչ չափով ընկերությունն իրագործել ե առևտրական գործունեյության պլանը գընումների նկատմամբ :

Այս հարցերը վերաբերում են ապրանքների գնումներին : Ի հարկե ապրանքների գնումների նկատմամբ կարող են ծագել շատ այլ հարցեր

ևս. մենք թվեցինք միմիայն գլխավորներն ու  
հիմնականները:

Յեթե ընկերությունը չի ունեցել առեւտրա-  
կան գործունեյության պլան, Վարչությունը  
պետք է բացատրի, թե ի՞նչու պլան չի կազմել:  
Պլանային աշխատանքը հանդիսանում է ընկե-  
րության ամբողջ գործունեյության հիմքը. ա-  
ռանց պլանի աշխատելով ընկերությունը միշտ  
ել կարող է ընկնել ծանր դրության մեջ, այս  
խնդրում Վարչությունը պարտավոր է իրեն  
պարզ հաշիվ տա, այս պետք է հասկանան նաև  
իրենք փայտերերը:

Ապրանքների գնման խնդրում մեծ նշանա-  
կություն ունի այն հարցը, թե ի՞նչ ե գնում ըն-  
կերությունը: Այստեղ Վարչությունը պետք է  
հայտնի, թե ի՞նչ ապրանքներ են նա գնել, վո՞ր  
շափով այդ գնումները համապատասխանել են  
դնորդների կարիքներին ու պահանջներին և  
փայտերերը մասնակցել են արդյոք ապրանք-  
ների տեսակավորումը կազմելու աշխատանք-  
ներին:

Այն հարցը, թե ընկերությունն ո՞ւմից ե  
ապրանքներ գնում, պետք է լուսաբանվի ման-  
րամասն ու լրիվ: Այստեղ ամնից շատ պետք է  
խոսել Միության և մասնավոր շուկայի հետ  
ունեցած կապերի մասին: Յեթե Միության  
հետ ունեցած կապը դալիս է խոսելու ընկերու-  
թյան լավ աշխատանքի մասին, ապա մասնա-  
վոր վաճառականներից կատարած գնումները  
կը բերեն այն համոզմունքի, վոր ընկերությու-

նը խուսափել և կապ հաստատել Միության  
հետ։ Ռւսաի վարչությունը պետք է բացատրի՝  
զնումները մասնավորներից կատարվում եյին  
անհրաժեշտությունից հարկադրված, թե  
կատարվում եյին սխարմամբ, անհեռատեսու-  
թյամբ և այլն։

Ապրանքների վորակին վերաբերող հարցը  
ներկայումս ունի մեծ նշանակություն։ Բոլոր  
գլխավոր ապրանքները պատրաստվում են պե-  
տական Փարբիկաներում և գործարաններում։  
Խորհրդային կառավարությունը ձեռք է առ-  
նում ամեն միջոց, վորակեալի բարձրացնի իր  
ապրանքների վորակը. սպառողները նույնպես  
պետք է ոգնեն կառավարությանը պետական  
արդյունաբերության ապրանքների վորակը  
յավացնելու աշխատանքների մեջ։ Ապրանքնե-  
րի վորակին վերաբերող բոլոր ցանկություն-  
ներն ու նկատողությունները վարչությունը  
պետք է հավաքի հաղորդի Միությանը. ուս-  
տի ընկերության գնած ապրանքների վորակի  
դնահատականը նույնպես պետք է նշանավոր  
տեղ գրավի հաշվետու ժողովում։ Այս բանին  
պետք է նպաստի վարչության զեկուցումը։

Վարչությունը պետք է հայտնի ժողովին,  
արդյոք չի յեղել դեպք, վոր գնվել և չվա-  
ճառվող ապրանք, կամ գնվել և այնպիսի քա-  
նակի ապրանք, վորը կարճ ժամանակամիջո-  
ցում (մինչև մեկ ամիս) անկարելի յեր վաճա-  
ռել։ Այս հանգամանքը շատ կարևոր է, ըստ վո-  
րում չվաճառվող ապրանքները, նույնպես

պահանջից անհամեմատ մեծ քանակի զնված ապրանքները գանդաղեցնում են ընկերության գրամագլուխների շրջանառությունը, իսկ շըրջանառության գանդաղումը թանկացնում է վարչության աշխատանքը և հաճախ ընկերությունը հասցնում է վողբալի գրության:

Ապրանքների գնման յեղանակները նույնպես պետք են լուսաբանվեն հաշվետու զեկուցման մեջ։ Այստեղ վարչությունը պարտական է Հաշիվ տալ այն մասին, թե ապրանքների գնումը նպատակահարմա՞ր յեղանակով ե կատարվել, չե՞ր կարելի արդյոք փոխել այդ յեղանակը (որինակ, միանալ այլ սպառողական ընկերություններին և խմբովին կատարել ազի գնումն, վորպեսզի կարելի լիներ ստանալ վագոնով անմիջապես աղահանքից, տալ կայուն պատվերներ, կնքել պայմանագիր Միության հետ այս կամ այն ապրանքները կամ մթերքները հայթայթելու համար, կիրառել գրավոր պատվերների ձեր և այլն)։

Ընկերությունը գնված ապրանքները գնահատում է և ապա վաճառում։ Մրա շուրջը ծագում են հետեւյալ հարցերը։

1. Ապրանքներն ի՞նչպես եյին գնահատվում։ Միջին հաշվով վո՞րքան եյին գալիս ապրանքների վրա։ Ի՞նչպիսի ապրանքների հավելումները մեծ եյին լինում և ինչպիսիներինը փոքր։ Ի՞նչու։ Համապատասխանո՞ւմ եյին արդյոք ընկերության հավելումները սահմանված նորմաներին։

2. Ի՞նչ ե ցույց տալիս ընկերության վահառած ապրանքների գների համեմատությունը մասնավոր վաճառականի գների հետ:

3. Ապրանքների փչացման դեպքեր տեղի չեն ունեցել արդյոք: Ի՞նչով են բացատրվում այդ դեպքերը: Վարչությունն ի՞նչպես ե վարվել փչացած ապրանքների հետ: Ի՞նչ վճառներ ե կրել ընկերությունը ապրանքների փչացումից:

4. Ընկերությունն ապրանքները ո՞ւմն եր վաճառում: Վո՞րքան եյին գնել փայտերերը և վո՞րքան մնացյալ ազգաքնակությունը:

5. Անդամները վոչ անդամների համեմատությամբ ի՞նչ արտոնություններ ունեյին ընկերության մեջ:

6. Վաճառում եր ընկերությունն ա՞րդյոք ապառիկ ապրանք: Ո՞ւմը: Ի՞նչ գումարի: Ի՞նչ հիման վրա: Ժամանակին եյին փակում արդյո՞ք գնորդներն իրենց պարտքը: Ի՞նչ գումար եր կազմում ժամանակը կորցրած ստանալիքները հաշվետու տարվա վերջում: Վարչությունը ի՞նչպիսի միջոցների յե մտածում դիմել ժամանակը կորցրած ստանալիքները գանձելու համար:

7. Տեղի ունե՞ցել ե մեծաքանակ վաճառքի դեպք: Ո՞ւմը: Ի՞նչու: Յեվ ի՞նչ գումարի:

8. Ընկերության խանութներում չկան արդյո՞ք չը ծախսող կամ անպետք ապրանքներ: Յեթե կան, ապա ի՞նչ գումարի: Ի՞նչու այդպիսի ապրանքներ են գնվել:

9. Հաշվետու տարում ընկերությունը ի՞նչ-պիսի ծախքեր ե ունեցել շրջանառության նը-կատմամբ։ Համապատասխանում եյին ար-դյունք այդ ծախքերը սահմանված նորմաներին։ Ի՞նչ ե արված ծախքերը կրնատելու համար (տնտեսելու բեժիմ)։

10. Ի՞նչ փոփոխություններ են կրել տար-վա թիրացքում հավելումներն ու ծախքերը շրջանառության նկատմամբ։

11. Վարչությունը ի՞նչ է արել գներն իջե-ցնելու համար։ Վարչությունը ի՞նչ չափով և իրազործել այս հարցի վերաբերմամբ Միու-թյան և այլ մարմինների տված ցուցմունիքները։

12. Հաշվետու տարում բոլոր ապրանքների վրա փորձան հավելում է կատարվել, ի՞նչ գու-մար են կազմում ծախքերը, և ի՞նչ գումարի ապրանք դուրս է գրված վորպես ծախք։ Ի՞նչ արդյունք-ոգուտ թե վճառ է տվել ընկերու-թյան առևտուրը հաշվետու տարում։

Այս բոլորը շատ պարզ հարցեր են և վար-չությանը բոլորովին դժվար չե պատասխան տալ այդ հարցերին։ Ըստ վորում հիմնական ուշագրությունը պետք է զարձնել գների իջեց-ման աշխատանքների—տնտեսման ըեժիմի ի-րականացման վրա։ Կոռպերացիան իր աշխա-տանքը պետք է այնպես տանի, վորպեսզի իր ծառայությունը սպառողին շատ եժան նստի։ Վաճառել, վորձան կարելի յե, ավելի պակաս զնով, այս մշտական հարցից բացի, կոռպերա-ցիան հաշվետու տարում ուներ կուսակցու-

թյունից և կառավարությունից ստացած հա-  
տուկ հրահանգ՝ իջեցնել գները հունվարի 1-ի  
համեմատությամբ։ Այս հատուկ հրահանգը  
կտտարելու մասին Վարչությունը նույնպես  
հաշիվ պիտի տա հաշվետու ժողովի տուած։

Չեկուցման այս մասում հարկավոր և խո-  
սք խանության հանձնաժողովների աշխա-  
տանքի և փայտատերերի ակտիվի կողմից ցույց  
տրված աջակցության մասին ընկերության  
տնտեսական աշխատանքներում։

Հաշվետվության մեջ կարենոր և առանձին  
ուշադրություն դարձնել այն բանին, թե ի՞նչ-  
պիսի արտոնություններ ե արված փայտատերե-  
րին (պարզե տարվա վերջում, ապրանքներ  
ստանալու իրավունք հերթից դուրս և այլն) և  
թե ընկերությունը վո՞ր չափով է կարողացել  
բավարարել փայտատերերի և վողջ ազգաբնա-  
կության կարիքները։ Յեթե փայտատերերը քի-  
են գնում ապրանք ընկերությունից, վարչու-  
թյունը պետք է իր կարծիքը հայտնի այդ յե-  
րեսույթի պատճառների և նրան վերջ տալու մի-  
ջոցների մասին։ Այստեղ հարկավոր է քննու-  
թյան առնել և ընկերության խանութներում  
գոյություն ունեցող գները և գործակատարնե-  
րի վերաբերմունքը գնորդների հետ և շատ ու-  
րիշ խնդիրներ։ Ընկերությունն ստեղծվում է  
փայտատերերի ջանքերով, ուստի նա առաջին  
հերթում պարտավոր է մթերել և բավարարել  
փայտատերերի պահանջները։ Ուստի այն հար-  
ցը, թե ընկերությունն ի՞նչ ոգուտներ և տվել

իր փայտերերին և գնորդներին հաշվետու տարում—պետք է կազմի վերջնական նպատակը հաշվետու գեկուցման այն մասի, ուր խոսվում է ընկերության առետրական գործունեյության մասին։ Այսուեղ կարեոր է հաշվել այն տնտեսումը, վոր ընկերությունը տվել է գնորդներին դների իջեցման հետեանքով։

#### Դ) ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

Սպառողական ընկերության պատրաստումների աշխատանքը պետք է կատարվի հատուկ այդ նպատակի համար ստացված կամ հատկացված միջոցներով։ Այս աշխատանքը չի կարող չհետաքրքրել սպառողական ըկներության փայտերերին, ըստ վորում նրանք կոռպերատիվ հիմունքներով կազմակերպելով իրենց գյուղատնտեսության մթերքների վաճառքը, դրանով իսկ մեծացնում են իրենց յեկամուները և, հետեապես, նպաստում են իրենց գնողական ընդունակության, նաև իրենց շրջանառության ընդարձակմանը։

Վարչության հաշվետու գեկուցումը մթերումների աշխատանքի շրջանում պետք է տեղեկություններ տա հետեյալի մասին։

1. Ընկերությունը մթերումների նկատմամբ ի՞նչպիսի պայմանագրեր և պարտավորություններ ե վերցրել իր վրա, ում համոր և ի՞նչ պայմաններով, ընկերությունը վո՞ր շափով ե իրագործել իր վրա վերցրած պարտականությունները համաձայն պայմանագրերի։

ի՞նչ միջոցներ են ստացված յեղել մքերում-ների համար և ի՞նչպես են ոգտագործվել նը-րանի:

2. Ի՞նչ արդյունեներ ե (ոգուտ կամ վճառ) տվել մքերումների գործը:

3. Մքերումներով և գյուղատնտեսության մքերքների վահառումով ի՞նչ ոգուտներ ե տվել ընկերությունը փայտատերերին և ամբողջ ազ-գարնակությանը:

**Առաջին Հարցի նկատմամբ** վարչությունը պետք է ասի, թե ընկերությունը մթերումների խնդրում ի՞նչ չափով է կապ պահպանել Միու-թյան հետ և ցույց տա այդ կապի թուլության, պատճառները, յեթե կապը Միության հետ այս իմաստով յեղել ե թույլ:

Պայմանագրերի և պարտականությունների կատարումը մթերումների խնդրում պետք է զեկուցվի, սակայն նշելով տարրեր տեսակի մթերքների գործարքները առանձին-առանձին, բոտ վորում պայմանագրերի խախտման յուրա-քանչյուր գեպքի և նրանց պատճառների մա-սին վարչությունը պիտի տա բացատրություն ու հայտնի, թե այդ խախտումներն ի՞նչ հե-տեանքներ են ունեցել կամ կարող են ունենալ ընկերության համար:

Շատ կարևոր է պարզաբանել մթերումների աշխատանքի հետեանքները: Այստեղ վարչու-թյունը պետք է հաշվի բոլոր յեկամուտներն ու ծախքերը՝ կապված մթերումների գործունե-յության հետ և բացատրի այդ գործունեյու-

թյան վերջնական արդյունքը հաշվական տարրում:

Հաշվետու ժողովում պետք է պարզաբանվի նույնագես աղղաբնակության շահին վերաբերող հարցը, շահ, վոր նա ստացել ե իր մըթերքները սպառողական ընկերության միջոցով վաճառելու հետեանքով։ Այստեղ շատ կարենոր ե համեմատել ընկերության վճարած գըները այլ մթերումներով զբաղվողների գների հետ, և նույնագես պարզաբանել այն առավելությունները (յեթե դրանք յեղել են), վոր ունենում են արտադրողներն իրենց մթերքներն ընկերությանը հանձնելու դեպքում։

Առանձին ուշադրություն պիտի դարձնել արտադրողների՝ մթերքների կոռպերատիվ վաճառքից գոյացած՝ ոգուտների մասնակցությանը վերաբերող հարցին։ Այս հարցի մասին մանրամասն տեղեկություն պարտավոր ե տալ կոռպերատիվների Միությունը, վորի համար ընկերությունը մթերումների գործարքներ և հատարում։

Յեթե ընկերության՝ մթերումների սպառման բուն աշխատանքի մեջ յեղել են պակասություններ ու թերություններ, նրանց մասին վարչությունը պարտավոր ե հաղորդել ժողովին, միաժամանակ ցույց տալով, թե ի՞նչպիսի միջոցների հարկավոր ե դիմել այդ պակասություններն ու թերությունները հեռացնելու համար։ Ընկերության վարչությունը պետք ե լավ գիտենա, թե գյուղացիությունն համար ինչ

մեծ նշանակություն ունի նրա տնտեսության  
մթերքների կանոնավոր ու շահավետ սպառու-  
մը, ուստի մթերումների աշխատանքին վերա-  
բերող բոլոր հարցերը հաշվետու զեկուցման  
մեջ պետք է լուսաբանվեն այնպես լրիվ, ինչ-  
պես և բնկերության առելարական աշխատ-  
տանքը:

### յի) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Շատ սպասողական ընկերություններ պա-  
հում են արդյունաբերական և ոժանգակ ձեռ-  
նարկներ (ջրազացներ, փոեր, թեյատրներ և  
այլն): Այս ձեռնարկների աշխատանքները  
նույնպես անհրաժեշտ են լուսաբանել հաշվետու  
զեկուցման մեջ:

Ընկերության արտադրական աշխատանք-  
ներին վերաբերող հաշվետվությունը պիտի իր  
մեջ պարունակի պատասխան, որինակ, այս-  
պիսի հարցերի.

1. Ընկերությունը հաշվետու տարում ի՞նչ-  
պիսի արդյունաբերական և ոժանգակ ձեռնար-  
կություններ ուներ: Վ՞որ չափով այդ ձեռնար-  
կություններն անհրաժեշտ եյին ընկերու-  
թյանը:

2. Ի՞նչումն երկայանում այդ ձեռնարկու-  
թյունների աշխատանքը:

3. Ի՞նչ արդյունքներ եյին տվել այդ ձեռ-  
նարկությունները (յուրաքանչյուրն առանձին  
և բոլորը միասին) մի տարում:

4. Ի՞նչ է մտադիր անելու այդ ձեռնարկությունների նկատմամբ վարչությունը:

Կուտակել միջոցներ (և այն ել բացառապես սեփական) արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկություններում՝ ընկերությունը պետք է համաձայնի միմիայն այն դեպքում, յերբ այդ ձեռնարկություններն անհրաժեշտ են ընդեկության անմիջական աշխատանքի համար (անդամների և ազգաբնակության սպառողական կարիքների բավարարումը) և յեթե նրանք բերում են վորեե ոգուտ: Միջոցներ պահել անշահավետ կամ վնասաբեր ձեռնարկություններում ընկերությունը վոչ մի կերպ չպետք է համաձայնի: Ընկերությունը չպետք է հրապուրվի ձեռնարկություններով նաև այն դեպքում, յերբ նրանց վրա վարչությունը մեծ ժամանակ է կորցնում, ըստ վորում դրանով թույանում է հիմնական-առևտրա-պատրաստման աշխատանքը:

Վարչությանը շատ անհրաժեշտ է իմանալ, ի՞նչ դրամագլուխ է կուտակված յուրաքանչյուր ձեռնարկության մեջ և քանի անգամ տարվա ընթացքում նա շրջանառություն է կատարում: Այս տվյալները հարկավոր են համեմատելու համար առևտրի մեջ յեղած դրամագլխի շրջանառության հետ: Հաճախ ձեռնարկություններում յեղած դրամագլխի դանդաղ շրջանառության հետևանքով ստացվում է անմիտիթար վիճակ (ճաշարաններում և թեյաներում դրամագլուխը կատարում է արագ

շրջանառություն, այդ պատճառով ել նրանք  
այնքան ել վտանգավոր չեն ընկերության հա-  
մար) :

Այսպիսով արդյունաբերական գործունե-  
յության նկատմամբ պահանջվում է շատ զգույշ  
մոտեցում. զեկավարվելով այսպես—վարչու-  
թյունը զեկուցման այս մասի վերջում պետք է  
ասի, թե ինքը հետագայում ի՞նչ և մատղիր  
տնելու իր ձեռնարկությունների հետ:

### գ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՑՈՒՆԾ

Նախորդ բոլոր հարցերը վերաբերում են ին-  
ընկերության տնտեսական աշխատանքներին:  
Այժմ վարչությանը անհրաժեշտ է լուսաբանել  
իր զեկուցման մեջ ընկերության ֆինանսական  
գրությունը: Այս ամենից լավ կարելի յե անել  
ընկերության հաշվեկշռի և շրջանառության  
հիման վրա: Այս մասում հարկավոր է փայտ-  
աբերերին տալ միմիայն մի քանի ամենափայ-  
տն և կարենը թվեր: Այստեղ պետք է ասել.

1. Ընկերության գրությունը հաշվետու-  
տարում համաձայն հաշվեկշռի լավացել ե թե՞  
վատացել:

2. Ընկերությունն ունի՞ր արդյոք ֆինան-  
սական աշխատանքի պլան և նախահաշիվ:

3. Վո՞րքան սեփական միջոց ունի ընկե-  
րությունը առևտրական շրջանառության մեջ:  
Շրջանառության մեջ յեղած սեփական մեկ  
բուրլուն քանի բուրլի ոտար միջոց է գալիս:

4. Ընկերությունը վո՞րքան ապրանքի պաշտոնական լուսաբառը:

5. Վ՞րքան է գնորդների պարտքը: Ի՞նչ է ցույց տալիս այդ պարտքի և ընկերության փայտարամազլիսի համեմատությունը: Ի հաշիվ վո՞ր միջոցների եյին վարկավորվում գրնորդները:

6. Ընկերության աշխատանքի մեջ հաշվական տարում տեղի չի՝ ունեցել արդյոք դրամական լարվածություն, ի՞նչից եյին պառաջ գալիս նրանք և վարչությունը ի՞նչպես եր դուրս գալիս այդ դրությունից:

7. Բողոքարկման չե՞ն գնացել արդյոք ընկերության մուրհակները: Ի՞նչից են սուածացել այդ բողոքարկումները: Յեթի յեղել են այդպիսիները, ապա ի՞նչ միջոցի յե դիմել վարչությունը վորապեսզի վերացնի բողոքարկումը:

8. Ի՞նչ տվեց ընկերության վողջ աշխատանքը—վճա՞ռ թե ոգուտ: Վարչությունը ի՞նչպես է մտածում բաժանել վաստակը (ծածկել վճառները):

9. Միությունը ի՞նչպես է գնահատում ընկերության դրությունը:

10. Վարչությունը ի՞նչպես է նայում ընկերության ապագա դրության վրա:

Հաշվետու զեկուցման այս ժամանակյաներ վարչությունը կստանա ընկերության հաշվետու տարվա սկզբի և վերջի հաշ-

վեկչիոների աշխամնասիրության և վերլուծության հիման վրա:

Վերլուծել Հաշվեկշիռը՝ մեր վարչությունների անդամները մեծ մասամբ կարողանում են արգեն, Հակոբակ զեղքում նրանց կազմի այս բանամ Հրահանգիչը:

Հաշվեկշիռները համեմատելիս անպայման Հարկավոր և պարզել, թե շրջանասության մեջ վո՞րքոն սեփական միջոցներ ուներ տարվա սկզբում և վերջում ընկերությունը և մեկ տարում սեփական միջոցները ուստի միջոցների համեմատությումը վո՞րքան եր բավացել կամ վատացել:

Այս կտառարժում և հետեւով ձևով՝ առ 1-ի հոկտեմբերի 1927 թվի և առ 1-ի հոկտեմբերի 1928 թվի (1927—1928 տնտեսական տարվա վերջն ու սկիզբը) Հաշվեկշիռներով վորոշվում են ընկերության վողջ պարտքի զումարը մի կողմից, և մյուս կողմից—զբամարկում յեղած դրամների ընդհանուր զումարը, խանութներում և պահեստում յեղած ապրանքը և դնորդների ու զանազանների պարտքը (այս բոլորը կազմում են ընկերության շրջանասության դրամագլուխը):

Ընդունենք, վոր ընկերության պարտքը կազմում եր տարվա սկզբում 6000 բուրլի, իսկ տարվա վերջում 7000 բուրլի, և վոր շրջանասություն դրամագլուխը կազմում եր առաջին դեպքում 10.000 բուրլի (դրամարկղը—500 ր., ապրանքներ—9.000 ր., ընկերության ստանու-

լիքները—500 ր.), և յերկրորդ գեղքում 12.000 ր. (գրամարկղը—1.000 ր., ապրանքներ—8.500 ր., բնկերության ստանալիքներ—2.500 բուրլի)։

Այժմ, շրջանառու գրամագլխից հանում ենք բնկերության պարագի գումարը։ Ստանում ենք։

Տարվա սկզբում	Տարվա վերջում
10.000 ա. շրջանառու գրամագր.	12.000 ա. շրջանառու գրամգլ.
6.000 ա. բնկերութ. պարագը	7.000 ա. բնկերութ. պարագը
4.000 ա. իր միջոցները շրջան. մեջ	5.000 ա. իր միջոցները շրջան. մեջ

4000 ր. և 5000 ր. կազմում են իր միջոցները շրջանառության մեջ տնտեսական տարվա սկզբում և վերջում։

Այժմ մենք ասում ենք, տարվա սկզբում իր շրջանառու միջոցների 4000 ր. գալիս եր 6000 ր. ոտար կամ իր 1 բուրլուն գալիս եր 1 ր. 50 կ. ոտար. իսկ տարվա վերջում իր շրջանառու միջոցների 5000 բուրլուն գալիս ե 7000 ր. ոտար կամ իր 1 բուրլուն գալիս ե 1 ր. 40 կ. ոտար։ Դրությունը լավացել ե—վորքան ոտար միջոցների հարաբերությունը փոքր ե իր միջոցների նկատմամբ, այնքան լավ ե բնկերության համար։ Սակայն հարկավոր ե տեսնել շարունակությունը—այստեղ պետք ե հարցնել շրջանառու գրամագլխի վոր մասը, վորտեղ ե կուտակված յեղել տարվա սկզբում և վերջում։ մեր բերած որինակում տեսնում ենք, վոր տարվա սկզբում և տարվա վերջում գրամարկղի և ապրանքների մնացորդի գումարը մնացել ե նույ-

նր, մինչդեռ ավելացել և առըստ վերջում բնկերության ստանալիքների մնացորդի գումարը: Այս պետք և հարկադրի վարչությանը մտածել և փորոշել, թե այդ ստանալիքները վո՞ր ժամկետում կդանձվեն:

Հետո, ապրանքների մնացորդը (վաճառքի գնով) պետք և համեմատել վաճառքի շրջանառության հետ: այս հարկավոր և կատարելու բարքանչուր ամիս: Այս համեմատությանը ցույց կտա, թե բնկերության ապրանքները ի՞նչ արտգությամբ են շրջան կատարել:

Այս կատարվում է հետեյալ ձեռվ, —ապրանքների մնացորդը առ 1-ն հոկտեմբերի 1927 թ. կազմում եր 9000 ր., իսկ առ 1-ն նոյեմբերի՝ 8·600 ր., հոկտեմբեր ամսին վաճառքը յեղել է 4·400 ր.: Մնացորդները գումարենք՝ ստանում ենք.

$$9\cdot000 + 8\cdot600 = 17\cdot600 \text{ ըուբի:}$$

Այս յերկու մնացորդների գումարն ե, միջին մնացորդը հավասար կլինի

$$17\cdot600 \text{ ր. : } 2 = 8\cdot800 \text{ ր. :}$$

Գետք և չմոռանալ հետեյալ որենքը. յեթե վաճառքը վերցվում է ծախու գնով, ապա ապրանքների մնացորդը նույնպես պետք է վերցնել ծախու գնով:

Բնկերությունն ունենալով ապրանքների միջին մնացորդ, կամ, ինչպես ասում են, պաշար 8·000 ր. մեկ ամսում արել և շրջանառություն 4·400 ր.: Այստեղից յերեսում ե, վոր մեկ ամսում շրջան և կատարել ապրանքների պաշա-

րի միմիայն կես մտար (4·400 ր. : 8·800 ր. =<sup>12</sup>) : Հետևապես, յեթե տպագայում ել ընկերությունն աւելենա այսպիսի ապրանքային շրջանառություն, ապրանքի լրիվ շրջանառության անողությունը հավասար կլինի 2 ամսվա, իսկ մեկ տարում լրիվ շրջանառություն կլինի 6 անգամ : Պարզ է, վոր ապրանքների շրջանառության այսպիսի արագությունը միանգամայն անբավարար է :

Հետաքրքիր և զնորդների պարտքը համեմատել փայտագրամագլխի գումարի հետ : Դրանց կարելի կլինի վորոշել, արդյոք փայտերերի մուծած փայտագնների գումարը մեծ է, թե այն գումարը, վոր նրանք վերցրել են ընկերությունից ապրանքային վարկով : Ապրանքային վարկերը բաց թողնելու դեմ, մանավանդ յերբ այդ կատարվում է անկարգ կերպով, պետք է պայքար մղել, ուստի հաշվետու ժողովում շատ մանրամասն կերպով պիտի քննել պնորդների հոգվածը : Միակ բացառությունը կարելի յե անել չքավորների վարկավորման նկատմամբ և այն ել ի հաշիվ հատկապես վաշխառուական վարկերի դեմ պայքարելու նպատկով կազմված ֆոնդերի :

Մուրհակների բողոքարկումը բողոքարկման յենթակա կազմակերպության համար մեծ հարված է : Աւստի, յեթե այդպիսի դժբախտություն է պատահել ընկերության հետ, այդ մասին հարկավոր է մանրամասն պատմել փայտերերին : Յեթե բողոքարկումը չի վերաց-

ված, հարկավոր և մասնել, թե ինչպես վերացնել այն և ապագայում և խռոսափել նրանից :

Հաշվետու զեկուցման մեջ պետք և տան, ընկերության աշխատանքների մեջ յեղե՞լ և արդյոք Փինանսական պլան և նախահաշիվ և ի՞նչ չափով են իրազործվել Հաշվետու տարում այդ պլանը և նախահաշիվը. ի՞նչով երացառքվում տարբերությունը պլանի ու նախահաշիվի մեջ մի կողմից և նրանց իրական դործադրության մեջ՝ մյուս կողմից :

Մնացյալ հարցերը հասկանալի յեն: Վաստակի բաշխման կարգը և վնասների փակումը պետք և համաձայնեցնել կանոնազրությունը և Միության ցուցմունքներին:

Փայտաերերի համար շատ կարեոր և Միության զնահատականը ընկերության գրության մասին: Ռւսակի վարչությունը պարագագոր և հայտնել փայտաերերին ընկերության գրության զնահատականը հիմնված հրահանգական զեկուցումների ու ակտերի վրա: Բացի այդ, հարկավոր և բերել ավյաներ իր ընկերության գրության և իր շրջանի այլ ընկերությունների գրության համեմատություններից :

Ընկերության Փինանսական գրությանը վերաբերող զեկուցման վերջում վարչությունը հայտնում և իր կարծիքը ընկերության ապագայի մասին և այն մասին, թե ինչ միջոցներ և

Հարկավոր ձեռք տանել հետագայում նըս զբությունը լավացնելու համար:

ե) ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱՆ-ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ՑԵՎ  
ԿՈՌԵՐԱՏԻՎ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բոլոր սպառողական բնիկերությունները պարագաներ են տանել կազմակերպչական և կոռագերատիվ-լուսավորությանը վերաբերող աշխատանք:

Այս աշխատանքի մտածն սարեկան ժողովում նույնական պիտի հաշիվ ներկայացվի:

Այդ հաշվեավության մեջ պիտք է զեկուցվի:

1. Ի՞նչումն եր կայանում ընկերության հասարակական-կազմակերպչական և կոռագերատիվ-լուսավորությանը վերաբերող աշխատանքը:

2. Կազմակերպվե՞լ ե և ի՞նչպես եր աշխատում լուսավորա-կազմակերպչական հանձնուդումը:

3. Կոռագերատիվ-լուսավորության աշխատանքը վո՞րչափով ե կարողացնել քափանցել խրնիք-ընթերցարանը:

4. Այդ աշխատանքն ի՞նչ է տվել փայտաների և մեացյալ ազգաբնակության գիտակցությունը բարձրացնելու խնդրում:

5. Ընկերությունն ինչ ծախքեր է կատարել կոռագերատիվ-լուսավորության աշխա-

տանիքը վարելու համար։ Ե՞նչպես և ոգտազրծվել կոռպերատիվ – լուսավորության փոնդը։

Այս բոլորը շատ պարզ հարցեր են։ Պատասխանել այս հարցերին զժգար չե վարչության համար։ Այդ պատասխանները պետք են երկայացվեն այսպես, վոր ժողովը կարողանա ըմբռնել հասարակական և կոռպերատիվ-լուսավորության աշխատանքների խոչը նրանակությունը։

### ը) ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

«Այլ հարցեր» կոչվածք նույնութեան շատ կարեոր են ընկերության համար։ Նրանք պետք են քննել խիստ ուշադրությամբ և մանրամասն։ «Այլ հարցերի» տակ մենք հասկանում ենք, ուրինակ, այսպիսի մեծ խնդիրներ։ այն և.

1. Ընկերության միջոցները չարաշահելու մասին (վատնում, կողոպուտ և այլն)։

2. Միության հետ ուսնեցած կապի մասին։

3. Տեղական մարմինների հետ ուսնեցած փոխհարաբերությունների մասին։

4. Այլ տեսակի կոռպերացիայի հետ ուսնեցած փոխհարաբերությունների մասին։

5. Ընկերության ծառայողների մասին։

6. Ապրանքների ապահովագրման մասին։

7. Վարչության և փայտերերի ակտիվի, խանությային հանձնաժողովների ու վերստուգիչ հանձնաժողովի փոխհարաբերությունների մասին։

Այսական, իհարկեց, կարելի յեւ թվել ընդհանուր բնույթի կրող շատ ուրիշ հարցեր են: Յեվ վարչությունը պետք է լավ մտածի, չըսկա՞ն արդյոք բացի հիշված հարցերից, այլ հարցեր, վորոնց պետք եր լուսաբանել զեկուցման այս մասում:

Միջոցների չարաշահումը կոռովերացիայի համար հանդիսանում է մեծ դժբախտություն: Այդ չարաշահումների գեմ հարկավոր է վրձուական պայքար տանել, վարչությունը պետք է զեկուցի ժողովին, թե ի՞նչ միջոցների յեւ դիմել ինքը, վորագեսպի չարաշահումներ տեղի չունենան և ի՞նչ ե արել արգեն յերեան հանած չարաշահումների նկատմամբ:

Այս հարցը պետք է լուսաբանել շատ մանրամասն ու լրիվ: Չպետք է մոռանալ, վոր չարաշահությունը կանգնեցնում է կոռովերացիայի զարգացումը և հրում և նրանից ազգաբընակությունը:

Միությունը գոյություն ունի ընկերությունների համար: Ընկերությունները համախմբում են Միության մեջ: Փայտաքերերը պետք ե իմանան, ի՞նչպես և ընկերության կազր Միության հետ: Յեվ այս մասին վարչությունը պետք ե խոսի իր զեկուցման մեջ, անպայման նշելով իր մասնակցությունը Միության գործում (համագումարներում, խորհրդակցություններում և այլն) և Միության վորոշումների ու ցուցմունքների կատարումն իր կողմից:

Սպասողական բնկերությունները պետք է  
զանվեն հարթված փոխհարաբերության մեջ  
տեղական մարմինների հետ (կուսակցական,  
խորհրդային և այլն)։ Այս փոխհարաբերու-  
թյունների մասին անշուշտ հաշիվ պիտի արգի  
տարեկան ժողովում։

Գյուղում, բացի սպասողական բնկերու-  
թյունից, զոյտթյուն ունեն և այլ տեսակի կոո-  
պերատիվներ (զյուղատնտեսական, վարկա-  
յին, անայնագործական և այլն)։ Յուրաքան-  
չյուրն այս կոոպերատիվներից պետք է աշխա-  
տանք տանի իր բնագավառում և չպետք է  
զբաղվի այն բանով, ինչ վոր իրենք հասուի  
չե։ Յուրաքանչյուր կոոպերատիվ պարագաներ  
և ոգնության համել մյուս կոոպերատիվնե-  
րին։ Տվյալ շրջանում զոյտթյուն ունի՞ ար-  
դյուք այդպիսի գրություն, ահա թե ինչպիսի  
հարց պետք է լուսաբանի վարչությունը փո-  
յատերերի ժողովի առաջ։ Յեթե այդպիսի գրու-  
թյան գետես չեն հասել, վարչությունը պետք  
է հայտնի, թե ի՞նչպիսի ջանք և թափել նա իր  
կողմից, վորպեսզի կարելի լիներ կանոնավոր  
փոխհարաբերություններ ստեղծել տարրեր  
կոոպերատիվների մեջ, և ի՞նչ արդյունք են  
ավել այդ ջանքերը։

Ընկերության ծառայողները շատ մեծ զեր  
են խաղում նրա աշխատանքների մեջ։ Վարչու-  
թյունը ժողովին պիտի տեղեկություն տա իր  
ծառայողների վորակի մասին, այն վարձատր-  
ության մասին, վոր նրանք ստանում են, նր-

բանց աշխատանքի մասին, նրանց պատրաս-  
տականության մասին և այլն:

Ապրանքների ապահովագրումը հրդեհից,  
զրամների ու ապրանքների պահպանությունը  
և ընկերության անուեական խնդիրների հետ  
կառված այլ հարցերը նույնականիա գեկուց-  
վեն ժաղավին: Վարչությունը պիտի հաշիվ տա-  
իրեն՝ անհրաժեշտ միջոցներն արդյոք ձե՞ռք և  
առել պահպաննելու համար իրեն վատահացած  
հասարակական գույքը:

Վերջապես վարչությունը պարտավոր է  
զեկուցել իր ունեցած վարչական գույների մասին  
մասին վայատերերի ակտիվի և խանու-  
թային ու վերատուգիչ հանձնաժողովների  
հետ:

### Բ) ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զեկուցման այս մասում վարչությունը  
պիտի ի մի ամփոփի հաշվետվության մեջ բո-  
լոր առածները, հանի ընդհանուր յեղբակացու-  
թյուն ընկերության գրության և աշխատանքի  
մասին. ցույց տալով. —

1. Ի՞նչ է հարկավոր անել, վորպեսզի ըն-  
կերությունը լավ գործի և լրիվ ու շահավետ  
կերպով բավարարի վայատերերի և ազգաքր-  
նակության կարիքները ու դատան իսկական  
հասարակական— կոռպերատիվ կազմակերպու-  
թյուն:

2. Այս բանի համար ի՞նչ պետք է անեն  
վայատերերը և ինքն ազգաքրնակությունը:

Յ. Մոտիկի ապագայում ի՞նչ պետք է անի  
ընկերության վարչությունը:

### Բ. ԻՆՉՊԵՍ ԶԵԿՈՒՑԵԼ

Այս հարցը, թե ի՞նչպես զեկուցել, ունի,  
թերեւ, վոչ պակաս նշանակություն, քան այն  
հարցը, թե ի՞նչ զեկուցել: Չե՞ վոր ընկերու-  
թյան աշխատանքի և զբության մասին անդամ  
շատ կարեոր և անհրաժեշտ տեղեկություն-  
ները կարելի կլինի այնպես զեկուցել, վոր նր-  
անք հասկանալի չլինեն հաշվետու ժողովին  
մասնակցադ վայցատերերին:

Ամենից սուաջ հարց և ծագում, վարչու-  
թյան մե՞կ, թե մի քանի անդամները պիտի  
հաշվետու զեկուցում տան: Այս հարցի պա-  
տասանը կախված է շատ պատճառներից: Յե-  
թե վարչության նախագահն իր զեկուցման մեջ  
չի կարող ընդգրկել ընկերության զործունե-  
յության բոլոր կողմերն ինչպես հարկն և, կոմ-  
յեթե նա հանդիսանում է վոչ բավարար չո-  
փով ընդունակ ու փորձված զեկուցող, նպա-  
տակահարմաք և զեկուցումը բաժանել մասերի  
և յուրաքանչյուր մաս հանձնարարել վարչու-  
թյան այս կամ այն անդամին, համաձայն այն  
աշխատանքի, վոր նա մշտական տանում և ըն-  
կերության մեջ:

Այն գեպքում, յերբ զեկուցողը պիտի լինի  
մեկ հոգի, զեկուցումն անպայման պետք է  
կազմվի այնպես, վորպեսզի ընկերության  
զործունեյության յուրաքանչյուր մասը ցու-

ցաղըսի պարզ և լրիվ։ Այսուզ կանոն պիտի  
գարձնել — քիչ խառջեր և շատ զործեր, քիչ  
բնդհանուր գտառզություններ և շատ խկա-  
կան ու ճիշտ նյութ։

Զեկուցումն յերկար չպիտի լինի։ Նա իր  
աեսպությամբ չպետք է ձանձրացնի լուզնե-  
րին։ Զեկուցումը հաշվեառ ժողովի բոլոր  
մտանակցողների համար պետք է լինի պարզ ու  
հասկանալի։ Զեկուցման առանձին մասերը  
պետք է կապված լինեն միմիանց հետ, և բնդ-  
հանքացումներն ու յեղբակացությունները  
պետք է բղիսն այն հարցերից, վորոնք աեղ են  
զտել զեկուցման մեջ։

Զեկուցումից հետո փայտաերերը կարող են  
հարցեր տալ վարչությանը, վարչությունը  
պարտավոր է պատասխանել աված հարցերին,  
բայց վորում, նույնիսկ այն դեպքում, յերբ զե-  
կուցում ավել և վարչության մեկ անդամը,  
պատասխանել կարող են վարչության մի քա-  
նի անդամներ, համաձայն իրենց վարած աշ-  
խատանքի։

Զեկուցումը և հարցերի պատասխանները  
պետք է տրվեն այն ձևով, վորակեազի փայտաե-  
րերը կարողանան լրիվ ու լայն կերպով քննա-  
դատել վարչության ներկայացրած հարցերը։  
Միմիայն այսպիսի պայմաններում հաշվեառ  
ժողովները կտան այն արդյունքները, վորակի-  
սիք իրավունք ունեն պահանջելու նրանցից փա-  
յտաերերի և մնացյալ աշխատավոր ազգարնա-  
կության լայն մասսաները։

Աւստի, այն հարցը, թե ի՞նչպես զեկուցել, նախորդք պետք է բնինվի վարչության նիստում. վարչությունը՝ բնկանուուր ուժերով պետք է ջանք թափի, վորապեսզի զեկուցումը տարնկերության համար մեծադաշտյան և բավարպույն հետեանքներ:

Մնում է ելի մեկ հարց, այն, թե ի՞նչպիս է լավ, զեկուցումը ներկայացնել բանավոր, թե կարգալ նախորդք պատրաստված դրավոր բովանդակությունը: Այսուղ չպետք է մռանալ, վոր կարգացվող զեկուցումը շատ ավելի վատ է յուրացվում, քան բանավոր զեկուցումը:

Աւստի մենք խորհուրդ ենք տայիս զեկուցումը չկարգալ այլ բանախոսել:

Իհարկե զեկուցողը ձեռքում պետք է ունենա անպայման այն հարցերի ցուցակը, վորոնց անհրաժեշտ ե զեկուցման ժամանակ լրացրանել: Այսուղ պետք է լինեն այն թվերը, վորոնց անհրաժեշտ ե ներկայացնել ժողովին: Այսպիսի զեկուցման կոնապեկտ պետք է դրված լինի պարզ ու ընթեռնելի և այն ել զեկուցողի ձևով, այլապես նա զեկուցման ժամանակ կարող է շիռթվել, իրենք կորցնել և զեկուցումը կփչանա:

Յեվ այսպես, մենք տեսնում ենք, վոր հաշվետու զեկուցումը մի շատ կարեւոր յերեվույթ է յուրաքանչյուր սպառողական ընկերության կյանքում: Այս յերեւոյթի համար անհրաժեշտ է նախորդք և Հիմնավոր կերպով

ոլտարաստվել։ Յեզ այս բանը վոչ մի դեպքում  
և վոչ մի սպասողական բնկեթություն մոռա-  
նալ չի կարող։

---

### III

## ՎԵՐՍԱՒԹԻՉ ՀԱՆՁԱՆԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

### Ա. ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅԵԼ

Հաշվետու ժողովում վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է հանդես զայ իր զեկույումով։

Այդ զեկույցումք բազկացուծ պիտք է յինի յերկու հիմնական մասերից։

Հաշվետվություն վերստուգիչ հանձնաժողովի աշխատանիքների մասին։

Վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունը վարչության աշխատանիքների մասին։

ա) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՍԱՒԹԻՉ ՀԱՆՁԱՆԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքներին վերաբերող հաշվետվությունը պարունակելու յն իր մեջ ամփոփումն այն բոլոր աշխատանքների, վոր հաշվետու տարում կտուրել և վերստուգիչ հանձնաժողովը։

Այդ ամփոփումի մեջ տեղ պիտի զտնեն հետեւյալ հարցերը։

1. Վերստուգիչ հանձնաժողովի անդամների կազմը։

2. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներից վո՞րը և ի՞նչ չափով է մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

3. Հանձնաժողովը քա՞նի նիստ ե ունեցել և այդ նիստերում ի՞նչպիսի կարևորագույն հարցեր են բննվել:

4. Հաշվետու տարում հանձնաժողովն ի՞նչ աշխատանքներ ե տարել, կատարել ե արդյունք և քանի՞ անգամ ապրանքների և դրամարկղի փաստացի ստուգում ու փաստաթղթերի վերստուգումն:

5. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները մասնակցել են արդյունք ընկերության վարչության նիստերին և ի՞նչումն ե արտահայտվել նրանց մասնակցությունն այդ նիստերում:

6. Ի՞նչումն ե կայանում վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքները զների իջեցման նկատմամբ:

7. Ատացել են արդյունք վերստուգիչ հանձնաժողովի անդամները վարձատրություն իրենց աշխատանքի համար, և յեթե ստացել են, ապա ի՞նչ հաշվով և ինչ գումարի:

8. Վո՞րպիսի փոխհարաբերություններ են ստեղծվել վերստուգիչ հանձնաժողովի և վարչության մեջ:

Բոլոր այս հարցերը վերստուգիչ հանձնաժողովի զեկուցողի կողմից կարող են զեկուցվել առանց դժվարության: Զեկուցման այս մասւմ կարիք չկա խոսել հանձնաժողովի աշխա-

տանքների արդյունքների մասին, այլ պետք  
է խոսել իր աշխատանքների մասին։ Հանձնու-  
ժողովի բարոր աշխատանքները պետք են հաշվել  
են, հնարավորության սահմաններում, ցույց  
տալ, թե տարբին վո՞րքան ժամանակ են խիել  
վերստուգիչ հանձնաժողովի անդամներից։

Վերստուգիչ հանձնաժողովի անդամները  
սովորաբար ներկա յեն լինում վարչության  
նիստերին, փայտաերերին կարեոր են խմանալ,  
թե ի՞նչումն եր կայանում վերստուգիչ հանձ-  
նաժողովի անդամների մասնակցությունն այդ  
նիստերին. արդյո՞ք չի յեղել դեպք, յերբ  
վերստուգիչ հանձնաժողովի անդամները վար-  
չության անդամների հետ միասին մասնակ-  
ցել են խնդիրների վորոշման մեջ, արդյո՞ք վեր-  
ստուգիչ հանձնաժողովի անդամները չեյին  
մոռանում իրենց պարտականություններն այդ  
նիստերի ժամանակ են այլն։

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն  
իրենց աշխատանքի համար կարող են ստանալ  
վորոշ վարձատրություն, ժողովին պիտի հայ-  
տնի լինի, տրվե՞լ ե արդյո՞ք վերստուգիչ հանձ-  
նաժողովի անդամներին վարձատրություն և  
ի՞նչ հաշվով ե տրվել։

Վերջին հարցը, վերստուգիչ հանձնաժո-  
ղովի և վարչության փոխհարաբերություննե-  
րի մասին պետք են զեկուցվի ժողովին և պետք  
ե զեկուցվի շխատկ ու բացահայտ կերպով։ Յե-  
թե այդ փոխհարաբերությունները լավ չեն յե-  
ղել, վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր

և հայտնել ժողովին իր կարծիքն այն պատճառների մասին, վորոնք խանդարել են ստեղծելու խաղաղ փոխարարելություններ :

բ) ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Վերստուգիչ հանձնաժողովը վարչության աշխատանքների վերաբերյալ իր զեկուցման մեջ տալիս ե ընկերության գործունեյության բոլոր կողմերի կարծ գնահատականը և ցույց ե տալիս այն անկանոնություններն ու սրխալները, վորոնք հաշվետու տարում թույլ են տրված յեղել վարչության կողմից :

Աւստի վերստուգիչ հանձնաժողովն առանձին ուշադրություն պիտի դարձնի հետեւյալ հարցերի վրա .

1. Կողմանութ, վատնում և այլ չարաշահություններ ընկերության շրջանառու միջոցների նկատմամբ :

2. Ապրանի վիճացում և պակասորդ :

3. Ընկերության կապը մասնավոր շուկայի հետ :

4. Ապրանի գնահատումն ընկերության մեջ :

5. Ընկերության ծախքերն ու հավելումները և

6. Ընկերության գործունեյության արդյունքները :

Բացի այդ, վերստուգիչ հանձնաժողովը  
հայտնում է.

7. Իր կատարած դրամարկղի և ապրանք-  
ների սուրզման, նույնպես փաստաթղթերի  
վերստուգման հետևանքները:

Ապա վերստուգիչ հանձնաժողովը տո-  
ւիս է.

8. Ընկերության դրության ընդհանուր  
գնահատականը, միաժամանակ այդ դրու-  
թյան մեջ առաջացած փոփոխությունը հաշ-  
վական տարում:

9. Ընդհանուր յեզրակացություն վարչու-  
թյան աշխատանքների մասին:

10. Յեզրակացություն ընկերության տա-  
րեկան հաշվետվության մասին:

11. Ընդհանուր գնահատական ընկերու-  
թյան՝ հասարակական և կոռպերատիվ-լու-  
սավորության վերաբերող աշխատանքների  
մասին:

12. Յեզրակացություններ՝ ընկերության  
բոլոր աշխատանքների մասին, ազգաբնակու-  
թյան հետ նրա ունեցած կապի մասին և այն  
ոգուտների մասին, վոր նա տալիս է փայտա-  
բերին և վողջ ազգաբնակությանը (կապված  
գների իջեցման հետ):

## Բ. ԻՆՉՊԵՍ ԶԵԿՈՒՑԵԼ.

Վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը  
ավելի լավ է, վոր ներկայացնի նրա անդամ-  
ներից մեկը համաձայն հանձնաժողովի վորոշ-

ման։ Իհարկե, առանձին գեղքերում հանձնա-  
ժողովի կողմից կարող են զեկուցել յերկու և  
տվելի անդամներ, բայց վորում յուրաքան-  
չյուրը զեկուցելու յի իր աշխատանքի մասին։  
Կարող ե այսպես լինել, վոր հանձնաժողովի  
մեկ անդամը կզեկուցի հանձնաժողովի աշխա-  
տանքների մասին, իսկ մյուսը կտա յեզրա-  
կացություն ընկերության աշխատանքների  
մասին։

Սակայն ավելի նպատակահարմար ե, վոր  
զեկուցի հանձնաժողովի մեկ անդամը (նա-  
խագահը), ինչպես փորձը ցույց է տվել։

Այս զեկուցմանը հարկավոր է պատրաստ-  
վել նախորդք։ Վերատուգիչ հանձնաժողովի  
զեկուցման այն մասը, ուր նո տալիս է իր յեզ-  
րակացությունը՝ վարչության աշխատանքի  
մասին (և հաշվեավության մասին), պետք է  
դրի առնվի և ուղարկվի վարչությանը, վոր-  
պեսզի նո վերատուգիչ հանձնաժողովի յեզրա-  
կացության առիթով տո իր յեզրակացությու-  
նը և առարկությանները։

Վերատուգիչ հանձնաժողովի զեկուցումը  
նպատակ չողեաք է զնի հրապարակ հանել մի-  
միայն վարչության գործունեյության բացե-  
րը, նո պետք է նշի նոն այդ աշխատանքի նր-  
գումումները։

Զեկուցումը պետք է լինի կարճ, հասարակ  
և ազգու։

Վերատուգիչ հանձնաժողովի զեկուցումը  
նպատակահարմար է անել վարչության զեկու-

ցուժից անմիջապես հետո։ Միմիայն այս զեպ-  
քում հաշվետու զեկուցման քննությունը տա-  
լիս և ամենացանկալի հետեանքները։

Վերստուգիչ հանձնաժողովի քննադատու-  
թյունը պետք է լինի բարեցակամ և խիստ։  
Յեթե նա վարչության աշխատնքների մեջ  
հայտնաբերել է չարաշահություններ կամ ան-  
վայել արարքներ, — այս բոլորը անպայման  
պետք է արտահայտվեն նրա զեկուցման մեջ։

Վերստուգիչ հանձնաժողովը չպետք է  
մոռանա, վոր իր գերը շատ պատասխանա-  
տու յե և վոր փայտաերերը վերստուգողներ  
ընտրում են վոչ թե պատվի, այլ ընկերության  
աշխատանքներին հետեւելու և հսկելու համար։  
Յեվ վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու  
ժողովում պետք է ներկայացնի այդ աշխա-  
տանքի կատարման լրիվ հաշվետվությունը։

---

## VI.

## ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վարչության կամ վերստուգիչ հանձնաժողովի անդամը կարգալով այս զրքույկը զեռիս չի կարող զեկուցում անել, նու միայն կը հասկանա թե ի՞նչպես և ի՞նչ պետք է արձանադրել այդ զեկուցման մեջ։

Զեկուցման համար տվյալներ հարկավոր ե վերցնել ընկերության գրքերից և նրա տարեկան հաշվետվությունից, վորը պարտագիր կերպով պետք է կազմի հաշվագրահար, վոչ ուշ, քան յերկու շաբաթ առաջ մինչեւ ժողովը։

Վարչությունը և վերստուգիչ հանձնաժողովը պետք է այդ հաշվետվությունն ուշադրությամբ քննեն և ուսումնասիրեն, ըմբռնեն յուրաքանչյուր թվի նշանակությունն ու իմաստը և այս քույրեց հետո միայն անցնեն իրենց տպագությունը զեկուցման մշակման աշխատանքներին։

Հաշվետվության անհասկանալի տեղերը բացատրելու համար հարկավոր ե դիմել իր շրջանի հրահանգչին կամ Միության կազմբաժնին։ Հրահանգչի հետ հարկավոր ե խորհրդակցել նույնպես ամբողջ զեկուցման առիթով։

Վարչությունը պետք է նշի ողուաների  
բաշխման և վնասների ծածկման կարգը և իր  
պլանի մասին հայտնի վերստուգիչ հանձնա-  
ժողովին։ Իսկ վերստուգիչ հանձնաժողովը  
վարչության ներկայացրած ողուաների բաշխ-  
ման կամ վնասների ծածկման կարգի առիթով  
պետք է պատրաստի ժողովի համար իր յեղ-  
թակացությունը։

Ընկերության հաշվետվության առկ սոս-  
րագրում և վարչությունը, իսկ ստուգիրոց  
հետո նաև վերստուգիչ հանձնաժողովը։ Այդ  
հաշվետվությունը մինչև ժողովը գտնվում է  
ընկերության գրասենյակում, և վարչությու-  
նը յերկու շաբաթ առաջ մինչև ժողովը, պար-  
ապուր և հայտաբարել, փոք փայտաերերը վո-  
րոշ որերի վորոշ ժամերին կարող են նայել ըն-  
կերության հաշվետվությունը։ Վարչությու-  
նը և վերստուգիչ հանձնաժողովն ամեն կերպ  
պետք է համոզեն փայտաերերին, ծանոթանալ  
հաշվետվության հետ, բայց վորում, յեթե  
փայտաերերն այդ անեն, նրանց հեշտ կլինի  
հասկանալ հաշվետու զեկուցումը և նրանք,  
հոգուու զործի, կարող կլինեն հաշվետու ժո-  
ղովի որը հրավարակ գալ և զեկուցման առի-  
թով իրենց քննադատական խոռքն առել։

Յուրաքանչյուր ընկերության վարչու-  
թյուն և վերստուգիչ հանձնաժողովը պետք է  
մշակեն հաշվետու ժողովի հրավիրման կարգը։  
Վորքան լավ կազմակերպվի ժողովը, վորքան

լավ ու լրիվ մշակվեն վարչության և վերատու-  
գիչ հանձնաժողովի զեկուցումները, այնքան  
այդ ժողովները կոստերատիվ աշխատանքի  
ամրապնդման ու լավացման ինդրում մեծ դեր  
կիրական:

---





17.	Ա.	Բոգդանով	<i>Տնտեսական գիտության համար</i>	— 50
18.	Մանուկ Կոռակերատիկ	<i>ուղիներով</i>	— 10	
19.	Դնեպրովսկի*	<i>Սովորեցեք պլանով աշխատ</i>	— 60	
20.	Ա.	Վ.	<i>Մարտովսկի Խափանվեց (պիես)</i>	— 10
21.	Գ.	Նազարյան*	<i>Ինչուս կազմակերպելու</i> <i>տանել կոռակխմբակի աշխատանքը</i>	— 50
22.	Վ.	Ալով Վոչիլ	<i>դեմ կովելու միջ</i> (պիեսա)	— 20
23.	Ն.	Նեկրասով	<i>Սովառ. կոռու. դրամագլուխ</i>	— 40
24.	Ակկողուս	<i>Ինչուս պետք և տուետուր անել</i>	— 20	
25.	Գ.	Նազարյան	<i>Մացքուր փայտվճարետ</i>	— 6
26.	Ի.	Ցինցովատով	<i>Ստուդիո</i> և <i>ուղղությունն</i> <i>տուր կոռակերատիվիդ</i>	— 10
27.	Դենիսով	<i>Կոռակերատիվիդ տերը յեղիր</i>	— 20	
28.	Դենիսով	<i>Հուշատետը խանութ. հանձնաժ</i>	— 10	
29.	Դենիսով	<i>Վերսուութիչ հանձնաժողովը</i>	— 20	
30.	Վլ.	Ֆոմիցկիյ	<i>Ի՞նչի մասին և ի՞նչուս պիտի զեկուց. վարչութ. և վերսու. հանձ.</i>	— 10

Բացի այդ գրականություննից, Հայկոռակի պահեստից կարելի յէ դուրս գրել բոլոր տեսակի հաշվապահական գրքեր (դյուլական ցանցի համար), կանոնադրություններ, րլանկներ։  
Պատվիրաններն ուղղել Ցերեան Հայկոռակի Կուլտ-  
քածին։

*Պատվիրանները կատարվում են կանխիկ հաշվով կամ  
վերադիր վճարով։*

Այն սպառողական ընկերությունները, վորոնք գրքի  
տուետով են զբաղվում, ոգտվում են սովորական  
գեղջով։

[184.]

A  
832

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Օրադ.



FL0045172